

Վերջը՝ «Րամեալ սիրով կամ Քեթանեայ,
Ըզբարեկամս ես աստ տեսայ,
Բերկրեալ սըրտիւ զուարճացայ,
Եւ ի Տեառնէ յոյժ գոհացայ:
Եթէ լինի ոք զարմասցի,
Վասն գալոյն մեր աստ տեղի,
Այժմ ոչ կամիմ գրել արակի,
Յորժամ գայցեմ՝ անդ պատմեսցի:
Յնորեալ մտօք զայս գրեցի,
Ձեր մեծութեանցըզ յայտնեցի,
Եթէ գո ձեզ սէրն յառաջի,
Գրեցէք առ մեզ նուաստագունի»:

5. Թղ. 96բ. Աղերս առ Ս. Աստուածածին՝ բազ-
կացեալ ինը տուներէ, որոնց սկզբնատառերը կը յօ-
դեն՝ ԿՈՄԻՏԱՍԻ Ե:

Ակրգբը՝ «[Կ]ոյս անարատ հարսն երկնային,
Մաքուր անրիժ մայր անեղին».

Վերջը՝ «Երանելեաց սուրբ երամին,
Արժանացո՛ղ զձառայս քոյին,
Լսել զձայնն աստուածային,
Ձեկայք օրհնեալքն յաւիտենին»:

6. Թղ. 97ա. բ. Աղերս առ Ս. Աստուածածին,
բազկացեալ ինը տուներէ, որոնց սկզբնատառերն ու
վերջատառերը կը յօդեն՝ Ի ԿՈՄԻՏԱՍԻԷ, ամէն մէկ
տառ չորեքկնուած⁽¹⁾:

Ոտանաւորիս ստորին լուսանցքին վրայ մանր տա-
ռերով գրուած է. «Ռձն ապրիլի ԻԲ. Գշի գիշերի՝
լոյսն Կարիճ, ծնանի Կումիտաս»⁽²⁾:

(1) Հրատարակուած՝ Սիոն, 1932, էջ 392:

(2) Հմմտ. Բագմազկէպ, 1926, էջ 198, Ո. Կ. ի յօդուածը: